ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **25.01.2022թ.**

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամների (Ա. Ասոյան, Ա. Խոջոյան, Ժ. Մայիլյան, Հ. Պողոսյան, Շ. Դանիելյան և Վ. Պետրոսյան) առաջարկով որոշվել է Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվության նախագիծը, 2021 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը և Որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունները հաստատել էլեկտրոնային քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2022 թվականի հունվարի 24-ին ժամը 09:00 և ավարտվել 2022 թվականի հունվարի 25-ին ժամը 18:00:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարցեր.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվության նախագծի հավանության արժանացում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններ:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)

Լ. Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Խոջոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Վ. Հովհաննիսյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ժ. Մայիլյան - «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը քվեարկեց բոլոր հարցերին կողմ,
2) Լ. Նանուշյանը քվեարկեց բոլոր հարցերին կողմ,
3) Ա. Ասոյանը քվեարկեց բոլոր հարցերին կողմ,
4) Ա. Խոջոյանը քվեարկեց բոլոր հարցերին կողմ,
5) Վ. Հովհաննիսյանը քվեարկեց բոլոր հարցերին կողմ,
6) Ժ. Մայիլյանը քվեարկեց բոլոր հարցերին կողմ,
7) Հ. Պողոսյանը քվեարկեց բոլոր հարցերին կողմ,
8) Շ. Դանիելյանը քվեարկեց բոլոր հարցերին կողմ,
9) Վ. Պետրոսյանը քվեարկեց բոլոր հարցերին կողմ:

Քվեարկության արդյունքը՝ բոլոր հարցերին 9 կողմ, 0 դեմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվությանը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարին.

1) միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններում նշված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ.

2) ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվություններով ներկայացված առաջարկությունների կատարումը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**